# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն, (098) 489272, arpi.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 22

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԼԱՎԻԿ ՉԱՊԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին մասի կետով հաստատված կարգի 29-րդ կետի "գ" ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Սլավիկ Չապանյանի դիմումը՝ ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփիի համայնքի Բերդաշեն գյուղում տեղակայված Սլավիկ Չապանյանի սեփականություն հանդիսացող 08-028-006 կադաստրային ծածկագրով 107,54 քմ մակերեսով հողամասի և նրա վրա կառուցված 0,0467 քմ մակերեսով շենքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Արփիի համայնքի Բերդաշեն գյուղի 2-րդ փ. 10-րդ օբյեկտ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵՐԳԵԼ ՂԱՐԻԲՅԱՆ**

2018թ. փետրվարի 20
գ.Բերդաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն, (098) 489272, arpi.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 21

ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԻՎ 1ՓՈՂՈՑԻ 4 ՓԿՂ. 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ և ԿԻՑ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արսեն Էլիբեկի Աղայանի (ծնված 03.11.1969թ. անձնագիր 005074513) դիմումը: Արփի համայնքի Բերդաշեն բնակավայրի թիվ 1 փողոցի 4փկղ. 2 հասցեում գտնվող հողամասի ընդհանուր մակերեսը փաստացի կազմում է 4000 քմ, որը Բերդաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 14.05.1991թ. N3 որոշման համաձայն սեփականաշնորհվել է Արսեն Էլիբեկի Աղայանի (ծնված 03.11.1969թ, անձնագիր 005074513): Հաշվի առնելով որ Արփի համայնքի Բերդաշեն բնակավայրի թիվ 1 փողոցի 4փկղ. 2 հասցեի շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականը և նրա զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով:

ՈՐՈՇՈՒՄ

1.Վերականգնել Արսեն Էլիբեկի Աղայանի (ծնված 03.11.1969թ անձնագիր 005074513) սեփականության իրավունքը ՝ Արփի համայնքի Բերդաշեն բնակավայրի թիվ 1 փողոցի 4փկղ. տուն 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ և ճանաչել նրա սեփականության իրավունքը՝ 4000 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Արփի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի վրա :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԵՐԳԵԼ ՂԱՐԻԲՅԱՆ**20__թ.

2018 Փետրվարի 19

գ.Բերդաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն, (098) 489272, arpi.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 20

## ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐՕՂԼՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենքների>> 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնքի մրցույթային հանձնաժողովի փետրվարի 16-ի N 10-ին արձանագրությանը.

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

Անդրանիկ Զորօղլյանին վարձակալական հիմունքներով հատկացնել 2.70895 հա 08-028-102 ծածկագրով գյուղնշանակության երրորդ կարգի վարելահող 25 տարի ժամկետով, համաձայն հատակագծի և պայմանագրի, որի տարեկան վարձավճարը կազմում է 11675(տասնմեկ հազար վեց հայրուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԵՐԳԵԼ ՂԱՐԻԲՅԱՆ**

20 18թ. փետրվարի 16
գ.Բերդաշեն